

հ.844180

19-06-2023թ.

Նախընտրած ծանուցման ձևը՝

Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ Վայոց ձորի մարզպետարան

Դիմող՝ ՍԻՍԱԿ ԽՈՒԴՈՅԱՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

Հասցե՝ ՎԱՅՈՑ ՁՈՐ, , ԱՂՆՁԱՁՈՐ,

3 Փ. 1 ՆՐԲ., 1,

anushkhudoyan666@mail.ru : 37477458230

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Ցանկանում եմ տեղեկացնել, որ Եղեգիսի համայնքապետարանի կողմից վերանորոգվում է Աղնջաձոր բնակավայրի մշակույթի տունը (հասցե՝ գ. Աղնջաձոր, 3-րդ փողոց, շենք1), որը նախատեսվում է վերածել հասարակական օբյեկտի (հանդիսությունների սրահի): Նախատեսվող հասարակական օբյեկտի և իմ բնակելի տան միջև հեռավորությունը կազմում է մոտ 5,5-6 մետր: Ըստ տեղում աշխատանքներն իրականացնող աշխատակիցների՝ հասարակական օբյեկտի հետնամասում, որտեղ գտնվում է իմ բնակելի տունը, նախատեսվում է կառուցել նաև հասարակական զուգարան: Հասարակական զուգարանի կառուցումը նախատեսվող վայրում առաջացնելու է հակասանիտարական իրավիճակ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն՝

1. Ըստ ՀՀ օրենսդրության՝ ինչ հեռավորության վրա պետք է գտնվի հասարակական օբյեկտը (հանդիսությունների սրահը) բնակելի տնից:
2. Ըստ ՀՀ օրենսդրության՝ ինչ հեռավորության վրա պետք է գտնվի հասարակական զուգարանը բնակելի տնից:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ՍԻՄԱԿ ԽՈՒԴՈՅԱՆ